«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 02.10.2026թ. թիվ 723 Ն/Մ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ

ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 9, 05.06.2025թ.
Արձանագրություն թիվ 4, 16.10.2026թ.

ՎԱՆԱՁՈՐ

2026թ.

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում (այսուհետև՝ համալսարան) ուսանողական գիտական խմբակի ձևավորման և աշխատանքների կազմակերպման պայմանները:

2. Հիմնական հասկացություններ

1. Ուսանողական գիտական խմբակը 5-6 ուսանողներից բաղկացած խումբ է, որն իրականացնում է հետազոտական աշխատանքներ՝ հաստատված ղեկավարով և թեմայով:

   (1-ին կետը փոփոխվել է 02.11.2026 թ. թիվ 723 Ն/Մ հրաման)

2. Ուսանողական գիտական խմբակները ստեղծվում են ուսումնական տարվա սկզբին և գործում են արտալսարանային ձևաչափով:

3. Ուսանողական գիտական խմբակի ստեղծման նպատակներն են՝

1. Խթանել ուսանողների հետաքրքրությունները գիտական հետազոտական աշխատանքի նկատմամբ:
2. Զարգացնել ուսանողների մոտ ստեղծագործական և վերլուծական մտածողություն, ինքնուրույն հետազոտելու կարողություն:
3. Ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները ուսանողների շրջանում:

4. Ուսանողական գիտական խմբակի ձևավորումը՝

1. Ուսանողական գիտական խմբակները ստեղծվում են ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով:
2. Ուսպնողական գիտական խմբակի հետազոտական թեման ընտրվում է ամբիոնի գիտահետազոտական ուղղություններին համապատասխան:
3. Ուսանողական գիտական խմբակի ղեկավարը խմբակի ստեղծման դիմում-հայտը ներկայացնում է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին կամ Գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների բաժնի ղեկավարին (Հավելված 1,2,3,4):

   (3-րդ կետը լրացվել է 02.11.2026 թ. թիվ 723 Ն/Մ հրաման)

4. Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը կամ Գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների բաժնի ղեկավարը հայտը ներկայացնում է

համապատասխան ամբիոն՝ քննարկման համար: Ամբիոնի նիստի դրական եզրակացության դեպքում հայտը սահմանված կարգով ներկայացվում է ռեկտորին՝ ուսանողական գիտական խմբակի ստեղծման վերաբերյալ հրաման ընդունելու նպատակով:

(4-րդ կետը փոփոխվել է 02.11.2026 թ. թիվ 723 Ն/Մ հրաման)

5. Տարբեր ամբիոնների և տարբեր մասնագիտություններից ուսանողների ներգրավման դեպքում անհրաժեշտություն առաջանալու դեպքում թույլատրվում է համաղեկավարումը:

(5-րդ կետը լրացվել է 02.11.2026 թ. թիվ 723 Ն/Մ հրաման)

5. Ուսանողական գիտական խմբակի ղեկավարը պարտավորվում է՝

1. Ուսանողական գիտական խմբակի ձևավորումը:
2. Խմբակի մասնակիցների աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և վերահսկումը:
3. Ըստ աշխատանքային պլանի կազմակերպում է քննարկումներ առնվազն ամիսը երկու անգամ:
4. Յուրաքանչյուր կիսամյակ ամբիոնի նիստին ներկայացնում է զեկույց գիտական խմբակի կատարված աշխատանքների վերաբերյալ:
5. Կազմակերպում և վերահսկում է ուսանողների ինքնուրույն գիտական աշխատանների ընթացքը:
6. Կազմակերպում է ուսանողների գիտահետազոտական աշխատանքների քննարկումներ:
7. Ուսանողներին նախապատրաստում է Ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներին:
8. Ղեկավարում է ուսանողների գիտական աշխատանքները:
9. Պարտավորվում է ապահովել ուսանողների մասնակցությունը մեկ գիտաժողովի և մեկ հոդվածի տպագրումը խմբակի գործունեության ընթացքում:

Ուսանողական գիտական խմբակի ղեկավարի աշխատանքները խրախուսվում են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգի համաձայն

6. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը ուժի մեջ է մտնում ՎՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունվելուց և Ռեկտորի կողմից հաստատվելուց հետո:

Հավելված 1

Ուսանողական գիտական խմբակի գիտահետազոտական թեմայի համառոտ բովանդակությունը

Ուսանողական գիտական խմբակի գիտահետազոտական թեման	
Թեմայի արդիականությունը	
Նպատակը և խնդիրները	
Ակնկալվող գիտական արդյունքները	
Գիտության սույն բնագավառի հետազոտությունների ներկայիս վիճակը	

Հավելված 2

Համառոտ տեղեկատվություն ենթաձեռնող ուսանողական գիտական խմբակի ղեկավարի և/կամ համաղեկավարի մասին

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Աշխատավայր (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե), զբաղեցրած պաշտոն	
6.	Ամբիոն	
7.	Կրթություն, որակավորում (կրթական որակավորում, ֆակուլտետ, բուհ)	
8.	Գիտական աստիճանը (առկայության դեպքում)	
	Առաջարկվող կամ հարակից թեմայի վերաբերյալ առկա գիտական հետազոտական աշխատանքները:	

(լրացվել է 02.11.2026 թ. թիվ 723 Ն/Մ հրաման)

Հավելված 3

Համառոտ տեղեկատվություն ուսանողական գիտական խմբակի անդամների մասին

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Ֆակուլտետ, մասնագիտություն	

Ուսանողական գիտական խմբակի ղեկավարի ստորոգրությունը



_____ _____

անուն,, ազգանուն, հայրանուն ստորագրություն


_____

ամիս, ամսաթիվ, տարի

Հավելված 4

Ուսանողական գիտական խմբակի աշխատանքային պլան

	Աշխատանքի անվանումը	Գործողություններ	Ժամկետներ	Պատասխանատու (ներ)	Ցուցիչ(ներ)	Հաշվետու պարտադիր փաստաթղթեր
1						
2						
3						
.						
.						



անուն,, ազգանուն, հայրանուն

ստորագրություն

ամիս, ամսաթիվ, տարի